

Ուղեցույց - Ձեռնարկ

Դիմումների
հաշվառման
տեղեկատվական
համակարգ

Երևան 2015

Բովանդակություն

Համակարգում հանդիպող պատկերագրեր	5
Ա. Դիմում ընդունող.....	6
Դիմումներ	7
Նոր դիմում	11
Կից ֆայլեր	17
Կցել ֆայլ	18
Բնօրինակ փաստաթղթեր.....	21
Շահառուի բոլոր կից ֆայլերը.....	22
Տպել.....	23
Խմբագրել.....	25
Հաստատել.....	26
Կարգավիճակի պատմություն	28
Փոխկապակցված դիմումներ.....	29
Մահվան գրանցում.....	31
Դիմումի տեղափոխում	32
Ժամկետանց դիմումներ	33
Ընդլայնված որոնում	34
Տեղափոխված դիմումներ.....	35
Անձ.....	36
Արխիվացում.....	39
Հաշվետվություններ.....	45
Ըստ միասնական ընդունարանների	46
Ըստ միասնական ընդունարանների և տարածքային մարմինների.....	48
Ըստ միասնական ընդունարանների, տարածքային մարմինների և նպատակների	50
Ըստ դիմում ընդունողների, տարածքային մարմինների և նպատակների	53
Ըստ տարածքային մարմինների և դիմում ընդունողների.....	55
Ժամկետանց դիմումներ ըստ ՀԿ-ի տարածքային մարմնի	57
Ժամկետանց դիմումներ ըստ ՀԿ-ի, տարածքային մարմնի ու նպատակի.....	59
Ժամկետանց դիմումներ ըստ ՀԿ-ի ու նպատակի.....	61
Բ. Տարածքային մարմնի ղեկավար՝ Դեր2.....	63
Դիմումներ	64
Ժամկետանց դիմումներ	64
Կից ֆայլեր	65
Կատարել	66
Կարգավիճակի պատմություն	67
Նշանակել ղեկքի վարում.....	68
Փոխկապակցված դիմումներ.....	69
Մահվան գրանցում.....	69
Նշանակել	70
Դիմումի տեղափոխում	71
Ընդլայնված որոնում	71
Տեղափոխված դիմումներ.....	71
Արխիվացում.....	72
Հաշվետվություններ.....	72
Գ. Տարածքային մարմնի աշխատակից՝ Դեր3.....	73
Դիմումներ	74
Իմ դիմումները	75
Կից ֆայլեր	76










Պատասխանել	77
Կարգավիճակի պատմություն	78
Նշանակել դեպքի վարում	79
Փոխկապակցված դիմումներ	79
Մահվան գրանցում	80
Ժամկետանց դիմումներ	81
Ընդլայնված որոնում	81
Տեղափոխված դիմումներ	82
Արխիվացում	82
Հաշվետվություններ	83
Դ. Ադմինիստրատորների համար	84
Կառավարում	85
Իրավասության նշանակում	86
Դեր	88
Օգտվող	91
Համալիր կենտրոն	93
Պետություն	95
Մարզ	97
Համայնք	99
Բնակավայր	101
Փողոց	103
Տարածքային մարմին	105
Դիմումի նպատակ	107
Փաստաթղթի տեսակ	109
Իրավասության նշանակում (նկարագրում)	111
Իրավասության ճանապարհ	113

Թարմացումը կատարվել է 12-11-2015 թ.:

Համակարգը նախատեսված է Համալիր սոցիալական ծառայությունների, տարածքային կենտրոնների միասնական ընդունարաններում դիմումների հաշվառման և շրջանառության համար:

Համակարգում հանդիպող պատկերագրեր

Համակարգի աշխատանքի ընթացքում հաճախակի հանդիպող պատկերագրերն են՝

	- Դիտել տվյալները
	- Խմբագրել տվյալները
	- Ի Լրումն
	- Աջ կողմ փոխանցող սլաք
	- Ձախ կողմ փոխանցող սլաք
	- Ջնջել տվյալները
	- Արտածել էջերով
	- Արտածել բոլորը
	- Արտածել Excel միջավայր

Ա. Դիմում ընդունող

Դիմումների հաշվառման տեղեկատվական համակարգը նախատեսված է համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, միասնական ընդունարաններ դիմած քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները հաշվառելու և դրանց համապատասխան ըստ ուղղությունների, նպատակների, դիմումների քանակի և կատարման վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:



Նկ. 1

Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է սեղմել **2՝ Մուտք** հրամանը:

Էկրանին կբացվի նոր պատուհան՝ **նկ. 2:**

1 դաշտում անհրաժեշտ է մուտքագրել օգտվողին կցագրված ծածկանունը:

2 դաշտում անհրաժեշտ է մուտքագրել ծածկանվանը համապատասխանող ծածկագիրը:

Եթե ցանկանում եք, որ Ձեր մուտքագրած ծածկանունը և ծածկագիրը հիշվի համակարգում, ապա պետք է նշել **3՝ Հիշել** պատկերագիրը:

Նկ. 2

Էկրանին կբացվի տվյալ օգտվողին՝ դիմում ընդունողին, համապատասխան էջը՝ **Գլխավոր հրամանաշարքը, նկ. 3:**



Նկ. 3

Գլխավոր հրամանաշարքը կազմված է հետևյալ բաժիններից՝

- ... **1՝ Գլխավոր**
- ... **2՝ Դիմումներ**
- ... **3՝ Անձ**
- ... **4՝ Արխիվացում**
- ... **5՝ Հաշվետվություններ**
- ... **6՝ Ելք**

Գլխավոր հրամանաշարքի յուրաքանչյուր բաժինն մատնահարվածելով, ստորև կբացվեն տվյալ բաժնին համապատասխան դաշտեր:

Դիմումներ

Գլխավոր հրամանաչարքից՝ **Նկ. դիմում 1**, սեղմել **2՝ Դիմումներ** բաժինը:

Գլխավոր	Դիմումներ	Անձ	Արխիվացում	Հաշվետվություններ	Ելք (vedi.dimum1)
1	2	3	4	5	6

Նկ. դիմում 1

Էկրանին կբացվի նոր էջ, որն ունի հետևյալ տեսքը՝ **Նկ. դիմում 2**:

Դիմումներ

1	2	3	4
Նոր դիմում	Իմ դիմումները	Ժամկետանց դիմումներ	Տեղափոխված դիմումներ

#	ՀՄՏՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Արխիվացված է	Գրանցվել է	Վերջնամատչվել	Հանառ.	ԱՀՓ համարը
	Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Ա10
1	Վեռի	02-2-150021015	Բժշկատեղիայական փորձաքննության գործակալություն	Երկարաձգել ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ժամկետը	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-28	Վաչիկ Հովհաննեսի Ջազյան	ԱԱ281993
2	Վեռի	02-2-150021014	Բժշկատեղիայական փորձաքննության գործակալություն	Որոշել հաշմանդամության պատճառական կապը	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-28	Վաչիկ Հովհաննեսի Ջազյան	ԱԱ281993
3	Աջափնյակ	09-3-150021013	Սոցիալական ծառայություններ	Մինչև երկու տարեկան երեխայի ինստիտուտի նպաստի դիմում	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-13	Մանամ Կիրակոսի Մաճկալյան	AN0678988

Նկ. դիմում 2

Ա տիրույթը ցույց է տալիս համակարգում առկա բոլոր դիմումները:

Էջում առկա են հետևյալ հրամանները՝

- ... **1՝ Նոր դիմում**, որով կարելի է մուտքագրել նոր դիմում
- ... **2՝ Ժամկետանց դիմումներ**, որով կարելի է դիտել ժամկետանց դիմումները
- ... **3՝ Ընդլայնված որոնում**, որով կարելի է համակարգում կատարել ընդլայնված որոնում
- ... **4՝ Տեղափոխված դիմումներ**, որով կարելի է դիտել տեղափոխված դիմումները
- ... **5՝ Դիտել**, որով կարելի է դիտել հաշվառված դիմումի տվյալները
- ... **6՝ Խմբագրել**, որով կարելի է խմբագրել հաշվառված դիմումի տվյալները
- ... **7՝ Ի լրումն**, որով կարելի է տվյալ դիմումին ի լրումն նոր դիմում հաշվառել
- ... **8՝ Դիմումի տեղափոխում**, որով կարելի է տվյալ դիմումը տեղափոխել



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Ի լրումն հրամանը կարելի է կատարել, երբ դիմումը հաշվառվել է և ստացել «Հաստատված է» կարգավիճակ, չունի խմբագրման և նոր փաստաթղթի կցման հնարավորություն, սակայն քաղաքացին ներկայացրել է նոր փաստաթուղթ, որը ևս պետք է հաշվի առնել դիմումի կատարման ընթացքում:

Այս ձևով հաշվառված դիմումները ստանում են նոր համար, սակայն ունենում են կապ նախորդ դիմումի հետ, ի լրումն, որի հաշվառված են:

Սեղմելով **7՝ Ի լրումն** հրամանը, էկրանին կբացվի նոր էջ՝ **Նկ. դիմում 2-1**:

Դիմումի մուտքագրում	
Ի լրումն դիմումի	
ՀՄՏՄ	Կապան
Դիմումի համար	02-2-150000000
Դիմումի ուղղությունը	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն
Դիմումի տեսակը	Դիմում բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու
Կարգավիճակ	Մուտքագրվում է
Դիմումատուի կապը շահառուի հետ	Հաճախորդ
Նշումներ	
Շահառու	Անահիտ Լևիկի Հովակիմյան
ԱՀՓ համարը	ՀՀ քաղաքացու անձնագիր AM0445506
ՀՄՀ	6704640010
Շահառուի հասցեն	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Դավթաշեն, Դավիթաշեն 3 Թղմ., 16, 20
Դիմումատու	Անահիտ Լևիկի Հովակիմյան
Դիմումատուի հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Դավթաշեն, Դավիթաշեն 3 Թղմ., 16, 20
ԱՀՓ համարը	ՀՀ քաղաքացու անձնագիր AM0445506
ՀՄՀ	6704640010

Նկ. դիմում 2- 1

Ա տիրույթը այն դիմումի տեղեկատվությունն է, որին պետք է ի լրումն նոր դիմում հաշվառել:

Դիմումատուի կապը շահառուի հետ		
Հաճախորդ		
Դիմումատուի որոնում		
ԱՀՓ տեսակ	Համար	
Օնոնյան վկայական	<input type="text"/>	
<input type="button" value="Որոնում"/>		
Դիմումատու	Անահիտ Լևիկի Հովակիմյան	
Դիմումատուի հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Դավթաշեն, Դավիթաշեն 3 Թղմ., 16, 20	
Օնոնյան թիվը	1964-04-17	
Սեռը	Ի	
ԱՀՓ համարը	AM0445506	
Հեռախոսի համարը	Բջջ. հեռախոսի համարը	Էլեկտրոնային փոստը
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Բ տիրույթում նախորդ դիմումատուի տվյալներն են, որոնք կարելի է թողնել նույնը կամ անհրաժեշտության դեպքում խմբագրել:

Խմբագրելու համար պետք է որոնել նոր դիմումատուի տվյալները ([բացատրությունը տե՛ս էջ 12](#)):

Գ1 Դիմումատուի փաստացի բնակության հասցե

Գ2

Գ
 Դիմում

Դիմումի ուղղությունը
 Բժշկատեղիայական փորձաքննության գործակալություն

Դիմումի տեսակը
 Դիմում ի լրումն նախորդիվ ներկայացված դիմումի

Նշումներ

Նկ. դիմում 2- 2

Գ տիրույթում մուտքագրվում է դիմումատուի փաստացի բնակության հասցեն:

Նշելով **Գ1** պատկերագիրը (նշման արդյունքում, պատկերագիրը ստանում է հետևյալ տեսքը՝) , **Գ2** տիրույթը կձևափոխվի, ստանալով հետևյալ տեսքը՝ **Նկ. դիմում 2-3**:

Գ1 Դիմումատուի փաստացի բնակության հասցե Գ

Մարզ	Համայնք	Բնակավայր	Փողոց	Շենք/Տուն Բնակարան	
<input type="text" value="Ընտրել"/> Գ2-1	<input type="text" value="Ընտրել"/> Գ2-2	<input type="text" value="Ընտրել"/> Գ2-3	<input type="text" value=""/> Գ2-4	<input type="text" value=""/> Գ2-5	<input type="text" value=""/> Գ2-6

Գ2

Դիմում

Դիմումի ուղղությունը
 Մոցիայական ապահովության պետական ծառայություն

Դիմումի տեսակը
 Դիմում ի լրումն նախորդիվ ներկայացված դիմումի

Նշումներ

Նկ. դիմում 2- 3

Գ2-1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անհրաժեշտ **մարզը**:

Գ2-2' «**Համայնք**» դաշտի ընտրացանկում կարտացոլվի այդ մարզին համապատասխան համայնքների ցանկը, որից էլ պետք է ընտրել անհրաժեշտ **համայնքը**:

Գ2-3' «**Բնակավայր**» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված համայնքի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ **բնակավայրը**:

Գ2-4' «**Փողոց**» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված բնակավայրի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ **փողոցը** (եթե փողոցի անունը բացակայում է այդ ցանկից, ապա ազատ տեքստով պետք է մուտքագրել անհրաժեշտ փողոցի անունը):

Գ2-5 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **շենք/տան համարը**:

Գ2-6 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **բնակարանի համարը**:

Կատարված փոփոխությունները ամրագրելու համար անհրաժեշտ է սեղմել **Հաստատել** հրամանը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Դիմումի տեղափոխում հրամանը կարելի է կատարել, երբ դիմումը հաշվառվել է և ստացել «**Հաստատված է**» կարգավիճակ:

Սեղմելով **8՝ Դիմումի տեղափոխում** հրամանը, էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմում 2-4**:

Գլխավոր / Դիմումի տեղափոխում / 02-1-150020977

Դիմումի տեղափոխում

Ստացող ՀԱՄՏԿ

1
▼

Տեղափոխման հիմքը

2

Հաստատել

Նկ. դիմում 2- 4

1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել դիմումը **ստացող ՀԱՄՏԿ-ն**:

2 դաշտում ազատ տեքստով պետք է մուտքագրել **տեղափոխման հիմքը**:

Կատարված տեղափոխումը ամրագրելու համար անհրաժեշտ է սեղմել **Հաստատել** հրամանը:

Նոր դիմում

Նոր դիմում մուտքագրելու համար անհրաժեշտ է սեղմել **1՝ Նոր դիմում** հրամանը՝ **Նկ. դիմում 3:**

Դիմումներ

1	2	3	4	5							
Նոր դիմում	Իմ դիմումները	Ժամկետանց դիմումներ	Շեղարկված որոնում	Տեղափոխված դիմումներ							
1-10 (21016-ից)											
#	ՀՄՏՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Արխիվացված է	Գրանցվել է	Վերջնաժամկետ	Հանառու	ԱՀՓ համարը	
	Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Ա10	
1	Վեղի	02-2-150021015	Բժշկատեղիական փորձաքննության գործակալություն	Երկարաձգել ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ժամկետը	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-28	Վաչիկ Հովհաննեսի Ջազյան	ԱԱ281993	6 7 8 9
2	Վեղի	02-2-150021014	Բժշկատեղիական փորձաքննության գործակալություն	Որոշել հաշմանդամության պատճառական կապը	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-28	Վաչիկ Հովհաննեսի Ջազյան	ԱԱ281993	Ա
3	Աջափնյակ	09-3-150021013	Մոցիսյանական ծառայություններ	Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի դիմում	Մուտքագրվում է	Ոչ	2015-10-29	2015-11-13	Մանամ Կիրակոսի Մաճկալյան	AN0678988	

Նկ. դիմում 3

Եկրանին կբացվի նոր էջ՝ **Նկ. դիմում 4:**

Գլխավոր / Դիմումներ / Դիմումի մուտքագրում

Դիմումի մուտքագրում

Դիմումատուի կապը շահառուի հետ

Համախորհրդ **1**

Դիմումատուի որոնում

ԱՀՓ տեսակ **2** Համար **3** **Ա**

Հեռախոսի համարը **4** Բջջ. հեռախոսի համարը **5** Էլեկտրոնային փոստը **6** **Բ**

7 Դիմումատուի փաստացի բնակության հասցե

Դիմում

Դիմումի ուղղությունը **8**

Դիմումի տեսակը **9**

Նշումներ **10**

11

Նկ. դիմում 4

1 դաշտի ընտրացանկից պետք է կատարել ընտրություն, ընտրելով **Դիմումատուի կապը շահառուի հետ**:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Համակարգն ավտոմատ նշում է «**Հաճախորդ**» տարբերակը, սակայն այն դեպքերում, երբ դիմումատուն դիմումը ներկայացնում է մեկ այլ անձի անունից, ապա անհրաժեշտ է ընտրել օրենքով սահմանված տարբերակը «**Դիմումատուի կապը շահառուի հետ**» բացվող ընտրացուցակից:

Ա տիրույթի դաշտերի օգնությամբ կատարվում է Դիմումատուի որոնում:

2 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել **ԱՀՓ տեսակը**:

3 դաշտում պետք է մուտքագրել **Փաստաթղթի համարը**:

Սեղմելով **Որոնել** հրամանը, համակարգը կկատարի որոնում բնակչության պետական ռեգիստրի առցանց տվյալների շտեմարանում, և գտնելով տվյալ համարով փաստաթուղթ, էկրանին կարտապատկերի տվյալները՝ **Նկ. Դիմում 5, Բ** տիրույթ:

Եթե տվյալ անձը ներկայացրած փաստաթղթով հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում, ապա տեղեկատվական համակարգն այդ մասին բերում է համապատասխան հաղորդագրություն և դիմումների հաշվառման տեղեկատվական համակարգում նոր անձի տվյալ հաշվառելու հնարավորություն՝ **Մուտքագրել նոր անձ** հրաման (**Տե՛ս Անձ քաժինը, էջ 37**):

Անձին Դիմումների հաշվառման տեղեկատվական համակարգում հաշվառելուց հետո հաշվառված փաստաթղթով «**Նոր դիմում**» բաժնում **Որոնել** հրաման տալով, համակարգը էկրանին կարտապատկերվի անձի տվյալները՝ **Նկ. դիմում 5**:

Դիմումատուի տվյալները բացակայում են

Դիմումատուի կապը շահառուի հետ

Հաճախորդ 1

Դիմումատուի որոնում

ԱՀՓ տեսակ Փաստաթղթի համար Ա

ՀՀ քաղաքացու անձնագիր 2 AG0444443 3 Որոնում

1-1 (1-թց)

	ԱՀՓ	ՀԾՀ	ԱՀՓ	ԲՊՈ գրանցման սկիզբ	ԲՊՈ գրանցման ավարտ	ԱԱՀ	Հասցե
Բ1	AG0444443	2703880391	AG0444443	2005-04-08	2015-04-08	ՎԱՐՇԱՆ ՏԻՐԱՑՈՒՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ՔԱՆԱՔԵՌ ՀԵԿ ԲԱՆԱՎԱՆ Շ.17 Բև.9

Նկ. դիմում 5

Եթե որոնման արդյունքում գտնված անձը Ձեզ անհրաժեշտ անձն է, ապա պետք է նշել **Բ1** պատկերազիրը՝ ○ (նշման արդյունքում ○ պատկերազիրը ստանում է հետևյալ տեսքը՝ ⊙: Նշումը չկատարելու դեպքում համակարգը տվյալ դիմումը չի հաշվառի):

4 դաշտում պետք է մուտքագրել **Հեռախոսի համարը՝ Նկ. դիմում 4**: Այս դաշտում լրացվող տվյալը պետք է լինի թվային և չպարունակի 9 նիշից ավել նիշ:

Եթե դիմումատուն հեռախոսի համար չի ներկայացրել, ապա այս դաշտը կարող է մնալ դատարկ, քանի որ այն պարտադիր դաշտ չէ:

5 դաշտում պետք է մուտքագրել **Բջջ. Հեռախոսի համարը**: Այս դաշտում լրացվող տվյալը պետք է լինի թվային և չպարունակի 9 նիշից ավել նիշ: Եթե դիմումատուն հեռախոսի համար չի ներկայացրել, ապա այս դաշտը կարող է մնալ դատարկ, քանի որ այն պարտադիր դաշտ չէ:

6 դաշտում պետք է մուտքագրել **Էլեկտրոնային փոստը** (մուտքագրումը պետք է կատարել ըստ գոյություն ունեցող շաբլոնի, օրինակ՝ **arev @ mail.com**: Պարտադիր է «@» նշանը և անվանումից հետո «.» կետը):

Եթե դիմումատուն էլ. փոստի հասցե չի ներկայացրել, ապա դաշտը կարող է մնալ դատարկ, քանի որ այն պարտադիր դաշտ չէ:

Նշելով **7** պատկերագիրը (նշման արդյունքում, պատկերագիրը ստանում է հետևյալ տեսքը՝) **Նկ. դիմում 6**:

7 <input checked="" type="checkbox"/> Դիմումատուի փաստացի բնակության հասցե					Բ	
Մարզ	Համայնք	Բնակավայր	Փողոց	Շենք/Տուն Բնակարան		
Ընտրել Բ1	Ընտրել Բ2	Ընտրել Բ3	Բ4	Բ5	Բ6	

Նկ. դիմում 6

Այս նշումը կատարվում է այն դեպքում, երբ դիմումատուն Անձը հաստատող փաստաթղթով գրանցված է տվյալ հասցեում, սակայն փաստացի բնակվում է մեկ այլ հասցեում:

Գրանցման և փաստացի բնակության հասցեների համընկման դեպքում այս դաշտերի լրացումը պարտադիր չէ:

7 պատկերագրի նշման արդյունքում ստորև կբացվեն **Բ1, Բ2, Բ3, Բ4, Բ5, Բ6** դաշտերը:

Բ1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անհրաժեշտ **մարզը**:

Բ2՝ «Համայնք» դաշտի ընտրացանկում կարտացոլվի այդ մարզին համապատասխան համայնքների ցանկը, որից էլ պետք է ընտրել անհրաժեշտ **համայնքը**:

Բ3՝ «Բնակավայր» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված համայնքի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ **բնակավայրը**:

Բ4՝ «Փողոց» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված բնակավայրի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ **փողոցը** (եթե փողոցի անունը բացակայում է այդ ցանկից, ապա ազատ տեքստով պետք է մուտքագրել անհրաժեշտ փողոցի անունը):

Բ5 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **շենք/տան համարը**:

Բ6 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **բնակարանի համարը**:

Նկ դիմում 4-ի 8 դաշտի ընտրացանկից անհրաժեշտ է ընտրել **Դիմումի ուղղությունը**:

9 դաշտի ընտրացանկից անհրաժեշտ է ընտրել **Դիմումի տեսակը**:

10 տիրույթում մուտքագրվում են նշումները՝ ազատ տեքստով:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Եթե 1 դաշտի ընտրացանկից Դիմումատուի կապը շահառուի հետ ընտրվում է «Հաճախորդի լիազորված անձ», «Հաճախորդի օրինական ներկայացուցիչ՝ ծնող, որդեգրող, խնամակալ», «Օրենքով դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող անձ», «Այլ անձ», ստորև կբացվի Գ տիրույթ, որն իրենից կներկայացնի շահառուի տվյալները՝ նկ. դիմում 7:

Դիմումատուի փաստացի բնակության հասցե

Շահառու

ԱԶՓ տեսակ շահառ

Շահառուի փաստացի բնակության հասցեն Գ

Մարզ շահայեք Բնակավայր Փողոց Հենք/Տուն Բնակարան

Նկ. դիմում 7

Գ1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անհրաժեշտ **մարզը**:

Գ2՝ «Համայնք» դաշտի ընտրացանկում կարտացուլվի այդ մարզին համապատասխան համայնքների ցանկը, որից էլ պետք է ընտրել անհրաժեշտ **համայնքը**:

Գ3՝ «Բնակավայր» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված համայնքի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ **բնակավայրը**:

Գ4՝ «Փողոց» դաշտի ընտրացանկը ձևավորվում է ըստ ընտրված բնակավայրի, որից և պետք է ընտրել անհրաժեշտ փողոցը (եթե փողոցի անունը բացակայում է այդ ցանկից, ապա ազատ տեքստով պետք է մուտքագրել անհրաժեշտ փողոցի անունը):

Գ5 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **շենք/տան** համարը:

Գ6 դաշտում մուտքագրվում է անհրաժեշտ **բնակարանի** համարը:

Սեղմելով **Հաստատել** իրամանը էկրանին կբացվի նոր էջ՝ նկ. դիմում 8:

Դիմում համար՝ 02-2-150021016

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
Փոխկապակցված դիմումներ		Մահվան գրանցում		Նշանակել	Դիմումի տեղափոխում		

Դիմում		Ա
ՀՄՕՏՄ	Վեղի	
Դիմումի համար	02-2-150021016	
Դիմումի ուղղությունը	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն	
Դիմումի տեսակը	Որոշել հաշմանդամության պատճառական կապը	
Կարգավիճակ	Մուտքագրվում է	
Արխիվացված է	Ոչ	
Դիմումին նշանակվել է դեպքի վարում	Ոչ	
Դիմումատուի կապը շահառուի հետ	Հաճախորդի օրինական ներկայացուցիչ՝ ծնող, որդեգրող, խնամակալ	
Օգտագործող	Դիմում Ընդունող1	
Գրանցվել է	2015-10-30	
Վերջնաժամկետ	2015-11-29	
Նշումներ		
Նշանակվել է:	(Նշված չէ)	

Դիմումատուի տվյալներ		Բ
Դիմումատու	Վարդան Համկետի Տիրացույան	
Ծննդյան թիվը	1988-03-17	
Սեռը	Ա	
ԱՀՓ համարը	ՀՀ քաղաքացու անձնագիր AG0444443	
ՀՕՀ	2703880391	
ԱՀՓ-ի տրման ամսաթիվը	2005-04-08	
ԱՀՓ-ի վավերականության ժամկետը	2015-04-08	
Դիմումատուի հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արաբկիր, Քանաքեռ Հեկ Բանավան, 17, 9	
Դիմումատուի փաստացի բնակության հասցե	Երևան, Արաբկիր, Արաբկիր թաղամաս, քանաքեռ հեկ, 17, 9	
Դիմումատուի հասցեում հաշվառման ամսաթիվը	2008-06-27	
Հեռախոսի համարը		
Բջջ. հեռախոսի համարը		
Էլեկտրոնային փոստը		

Շահառուի տվյալներ		Գ
Շահառու	Վարդան Համկետի Տիրացույան	
Ծննդյան թիվը	1988-03-17	
Սեռը	Ա	
ԱՀՓ համարը	ՀՀ քաղաքացու անձնագիր AG0444443	
ՀՕՀ	2703880391	
ԱՀՓ-ի տրման ամսաթիվը	2005-04-08	
ԱՀՓ-ի վավերականության ժամկետը	2015-04-08	
Շահառուի հասցեն	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արաբկիր, Քանաքեռ Հեկ Բանավան, 17, 9	
Շահառուի փաստացի բնակության հասցեն	Երևան, Արաբկիր, Արաբկիր թաղամաս, քանաքեռ հեկ, 17, 9	
Շահառուի հասցեում հաշվառման ամսաթիվը	2008-06-27	
Նշում մահվան մասին	Մահացած չէ	

Նկ. դիմում 8

Մուտքագրված դիմումին կարելի՛

- Կցել ֆայլեր՝ **1՝ Կից ֆայլեր** հրաման (դիմում ընդունողի իրավասությունն է), ինչպես նաև դիտել կցված ֆայլերը (տվյալ դիմումին հասանելիություն ունեցող բոլոր օգտվողների իրավասությունն է)
- Տպել ստացական (դիմում ընդունողի իրավասությունն է), **2՝ Տպել** հրաման
- Դիմումը խմբագրել (դիմում ընդունողի իրավասությունն է), **3՝ Խմբագրել** հրաման
- Դիմումի կարգավիճակը դարձնել հաստատված (դիմում ընդունողի իրավասությունն է), **4՝ Հաստատել** հրաման
- Դիտել դիմումի կարգավիճակի պատմությունը (տվյալ դիմումին հասանելիություն ունեցող բոլոր օգտվողների իրավասությունն է)՝ **7՝ Կարգավիճակի պատմություն** հրաման
- Նշանակել դիմումին դեպքի վարում (համապատասխան մարմնի ղեկավարի իրավասությունն է)՝ **8՝ Նշանակել դեպքի վարում** հրաման
- Դիտել տվյալ անձի տվյալով համակարգում հաշվառված դիմումները (տվյալ դիմումին հասանելիություն ունեցող բոլոր օգտվողների իրավասությունն է), **9՝ Փոխկապակցված դիմումներ** հրաման
- Գրանցել դիմումատուի մահը (դիմում ընդունողի իրավասությունն է), **10՝ Մահվան գրանցում** հրաման
- Դիմումը տեղափոխել կարող է Դիմում ընդունողը, եթե դիմումի կարգավիճակը **Հաստատված է, 12՝ Դիմումի տեղափոխում** հրաման


Կից ֆայլեր

Մուտքագրված դիմումին կարելի է կցել ֆայլեր, 1՝ **Կից ֆայլեր** հրամանով:



Նկ. կ-ֆայլ 1

Սեղմելով **Կից ֆայլեր** հրամանը, էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. կ-ֆայլ 2**:



Նկ. կ-ֆայլ 2

U տիրույթը ցույց է տալիս տվյալ դիմումին կցված բոլոր ֆայլերը:

Յուրաքանչյուր կցված ֆայլին կից առկա են հետևյալ հրամանները՝

- **U4՝ Դիտել**, որը սեղմելով կարելի է դիտել տվյալ փաստաթուղթը:
- **U5՝ Խմբագրել**, որը սեղմելով կարելի է խմբագրել տվյալ փաստաթուղթը:


Սեղմել **U4՝ Դիտել** հրամանը:

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ կ-ֆայլ 3**:

Սեղմելով **Open with** հրամանը, տվյալ փաստաթուղթը կարելի է բացել, իսկ այն համակարգչում պահպանելու համար անհրաժեշտ է սեղմել **Save File** հրամանը՝ նշելով այն գրադարանը, որտեղ պետք է պահպանվի տվյալ ֆայլը:

Նշել **w**՝ պատկերագիրը, սեղմել **OK** հրամանը:

Էկրանին կբացվի կցված ֆայլը:



Նկ. կ-ֆայլ 3

Ա5՝ խմբագրել հրամանով խմբագրվում է կցված ֆայլի՝ փաստաթղթի տեսակը:



Եթե դիմում ընդունողը դիմումին արդեն տվել է «Հաստատված է» կարգավիճակ, ապա փաստաթղթի տեսակը այլևս հնարավոր չի լինի խմբագրել:

Կցել ֆայլ

Տվյալ դիմումին կարելի է կցել նոր ֆայլ, որի համար անհրաժեշտ է սեղմել **Ա1՝ Կցել ֆայլ** հրամանը, **նկ. կ-ֆայլ 4**:




Նկ. կ-ֆայլ 4

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. կ-ֆայլ 5**:

0 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անհրաժեշտ **փաստաթղթի տեսակը**:


1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անհրաժեշտ սկաների անվանումը և սեղմել **2՝ Ական** հրամանը:

Սկաների բացակայության դեպքում անհրաժեշտ նկարը կարելի է մուտքագրել սեղմելով **3՝ Բեռնել** հրամանը:




Նկ. կ-ֆայլ 5

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. կ-ֆայլ 6**, որտեղից անհրաժեշտ է ընտրել կցվող ֆայլի անունը:



Նկ. Կ-Ֆայլ 6

Սեղմելով **Open** հրամանը (տվյալ դեպքում ընտրվել է **Arev** ֆայլը) էկրանը կձևափոխվի ստանալով հետևյալ տեսքը՝ **նկ. Կ-Ֆայլ 7**:



Նկ. Կ-Ֆայլ 7

4 պատկերագրին մատնահարվածելով, կարելի է դիտել էկրանին արտապատկերված պատկերի նախորդ նկարը:

5 դաշտը ցույց է տալիս այն նկարի համարը, որն արտապատկերված է էջին:

6 դաշտը ցույց է տալիս առկա՝ կցված նկարների քանակը:

7 պատկերագրին մատնահարվածելով, կարելի է դիտել էկրանին արտապատկերված պատկերի հաջորդ նկարը:

8 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել նկարի անհրաժեշտ չափերը:

Ե պատկերագիրը նշելով, տվյալ նկարը կհամարվի բնօրինակ ձև:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Ե պատկերագիրը նշելու արդյունքում համակարգը բնօրինակ փաստաթղթերի քանակն ավտոմատ ցույց է տալիս «**Կից Ֆայլեր**» բաժնի «**Բնօրինակ փաստաթղթեր**» ենթաբաժնում (եթե նախօրոք առկա էին բնօրինակ փաստաթղթեր, ապա համակարգը ավելացնում է նրանց քանակը մեկով):

Ա՝ Ջնջել հրամանը սեղմելով, տվյալ՝ ընտրված նկարը, կարելի է ջնջել:

Բ՝ Ջնջել բոլոր նկարները հրամանը սեղմելով, ջնջվում են առկա՝ բոլոր կցված նկարները:

Տվյալ ընտրված նկարը կարելի է փոփոխել, այսինքն այն պտտել աջ (սեղմել **Գ՝ Պտտել աջ** հրամանը), կամ ձախ (սեղմել **Դ՝ Պտտել ձախ** հրամանը):

Հաստատել հրամանով, այս՝ բացված պատուհանը, փակվում է:

Բնօրինակ փաստաթղթեր


Տվյալ դիմումի բնօրինակ փաստաթղթերը կցելու համար անհրաժեշտ է սեղմել **Ա2՝ Բնօրինակ փաստաթղթեր** հրամանը, **նկ. կ-ֆայլ 8:**



Նկ. կ-ֆայլ 8


Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. կ-ֆայլ 9:**

1 դաշտում պետք է մուտքագրել բնօրինակ փաստաթղթերի քանակը, որից հետո սեղմել **Հաստատել** հրամանը:



Նկ. կ-ֆայլ 9

Կատարված գործողության արդյունքի մասին համակարգը կզգուշացնի հատուկ հաղորդագրությամբ, **նկ. կ-ֆայլ 10:**



Նկ. կ-ֆայլ 10

Շահառուի բոլոր կից ֆայլերը

Շահառուի բոլոր կից ֆայլերը դիտելու համար անհրաժեշտ է սեղմել **Ա3՝ Շահառուի բոլոր կից ֆայլերը** հրամանը, **նկ. կ-ֆայլ 11**:



Նկ. կ-ֆայլ 11

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. կ-ֆայլ 12**:

Գլխավոր / Դիմում / Շահառուի բոլոր կից ֆայլերը

Շահառուի բոլոր կից ֆայլերը

Վերադարձնալ

1-4 (4-ից)

#	Դիմում	Փաստաթղթի տեսակը	Ա	Էջերի քանակը	Ավելացման ամսաթիվ	Խմբագրման ամսաթիվը	
	<input type="text"/>	<input type="text"/>		<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	
1	01-4-150000122	Աշխատանքային զբոսով	Ա	1	2015-06-26	2015-06-26	Ա1
2	01-4-150000122	Ստացական		1	2015-06-26	2015-06-26	
3	01-4-150000188	12 շաբաթական և ավելի հոլիության մասին տեղեկանք		1	2015-07-02	2015-07-02	
4	01-4-150000188	12 շաբաթական և ավելի հոլիության մասին տեղեկանք		1	2015-07-02	2015-07-02	

Նկ. կ-ֆայլ 12

Ա տիրույթում արտապատկերված է շահառուի բոլոր կից ֆայլերը, որոնք կարելի է դիտել սեղմելով տվյալ տողին կից **Ա1** պատկերագիրը:


Տպել

Մուտքագրված դիմումին համապատասխան ստացականը կարելի է տպել, սեղմելով **2՝ Տպել** հրամանը, **նկ. տպել 1:**



Նկ. տպել 1

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. տպել 2:**



Նկ. տպել 2

Սեղմելով **Ա՝ Տպել** պատկերագիրը, տվյալ ստացականը կտպվի թղթի վրա:

Ստացականը տպվում է 2 օրինակից, որոնց վրա ստորագրում է և դիմումատուն, և դիմում ընդունողը: Ստորագրված օրինակներից մեկը տրվում է դիմումատուին, իսկ մյուս օրինակը դիմում ընդունողի կողմից «Կից ֆայլեր» բաժնի «Կցել ֆայլ» հրամանի միջոցով սկանավորվում և կցվում է դիմումին **Ստացական**

փաստաթղթի տեսակով, որից հետո միայն, դիմում ընդունողը կստանա հնարավորություն դիմումի կարգավիճակը «Մուտքագրվում է»-ից դարձնել «Հաստատված է»:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Սոցիալական ապահովության պետական ծառայությանն ուղղված դիմումների մուտքագրման ընթացակարգը տարբերվում է մյուս ծառայություններ ներկայացված դիմումների հաշվառման ընթացակարգից:

Այսպես՝

Դիմումատուին և շահառուին նույնականացնելուց հետո, դիմումի ուղղության համար Սոցիալական ապահովության պետական ծառայություն և դրան համապատասխան նպատակ ընտրելուց, և դիմումը հաստատելուց հետո, **Դիմումների հաշվառման տեղեկատվական համակարգն** ավտոմատ միանում է «Կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի՝ դիմումների հաշվառման էջին, որտեղ դիմումը հաշվառվում է, ինչպես նախկինում:

«Կենսաթոշակ» համակարգում դիմումի հաշվառումից, համապատասխան փաստաթղթերի սկանավորումից և կցումից, քաղաքացու ստացականի և դիմումի ստացումից և «Կենսաթոշակ» համակարգում այն կցելուց և դիմումը հաստատելուց հետո, դիմում ընդունողը քաղաքացու դիմումը սկանավորում և կցում է նաև **Դիմումների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգում՝ Ստացական** փաստաթղթի տեսակի տակ, և դիմումի կարգավիճակը դարձնում «Հաստատված»:

Խմբագրել

Մուտքագրված դիմումը կարելի է խմբագրել սեղմելով **3՝ Խմբագրել** հրամանը՝ **Նկ. դիմ. 1:**

Ֆյուսիոր / Դիմումներ / 02-1-150020977

Դիմում համար՝ 02-1-150020977

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
9	10	11	12				
Փոխկապակցված դիմումներ		Մահվան գրանցում	Նշանակել	Դիմումի տեղափոխում			

Նկ. դիմ. 1

Էկրանին կբացվի նոր էջ՝ **Նկ. դիմ 2:**

Կատարելով անհրաժեշտ փոփոխությունները, պետք է սեղմել **Խմբագրել** հրամանը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Խմբագրել հրամանը ակտիվ է միայն այն դեպքում, երբ դիմումն ունի «Մուտքագրվում է» կարգավիճակ:

Ֆյուսիոր / Դիմումներ / 22-4-150000161 / Խմբագրում

Խմբագրել դիմում՝ 22-4-150000161

Դիմումատուի կապը Հանրային կենտրոնի հետ

Հաճախորդի կիսագրված անվանում

Դիմումատուի որոնում

ԱՀՓ տեսակ Համար

Օնլայն վկայագր

Դիմումատու	Վարդան Համբարձումի Յրաբեկյան
Դիմումատուի հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արարիկի, Քանաքեռ Շէկ հանրակաց, 17, 9
Օնլայն թիվը	1988-03-17
Մեք	Ա
ԱՀՓ համարը	AG0444443

Հեռախոսի համար Բջջ. հեռախոսի համար Էլեկտրոնային փոստ

Դիմումատուի փաստացի բնակության հասցե

Շահառու

ԱՀՓ տեսակ Համար

Օնլայն վկայագր

Շահառու	Մարիանա Վլադիմիրի Կոբոյան
Շահառուի հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արարիկի, Քանաքեռ Շէկ հանրակաց, 29, 48
Օնլայն թիվը	1987-02-10
Մեք	Ա
ԱՀՓ համարը	AG0444444

Դիմում

Դիմումի ուղղությունը

Դիմումի տեսակը

Նշումներ

Նկ. դիմ. 2

Հաստատել

Հաստատել հրամանով դիմումի կարգավիճակը կարելի է դարձնել հաստատված:

Տվյալ դեպքում գշխավոր հրամանաշարքում այն պատկը է՝ **Նկ. դիմ. 3:**

Գլխավոր / Դիմումներ / 02-1-150020977

Դիմում համար՝ 02-1-150020977

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
9	10	11	12				
Փոխկապակցված դիմումներ		Մահվան գրանցում	Նշանակել	Դիմումի տեղափոխում			

Նկ. դիմ. 3



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Հաստատել հրամանը ակտիվ է դառնում այն դեպքում, երբ կից ֆայլեր բաժնում ստացական տեսակի ֆայլ է կցվել:

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
9	10	11	12				
Փոխկապակցված դիմումներ		Մահվան գրանցում	Նշանակել	Դիմումի տեղափոխում			

Նկ. դիմ. 4

Էկրանին կբացվի նոր էջ՝ **Նկ. դիմ. 5:**

Գլխավոր / 02-2-150021016 / Դիմումի կարգավիճակի փոփոխություն

Դիմումի կարգավիճակի փոփոխություն

1-1 (1-ից)

#	Դիմում	Ավելագրման ամսաթիվ	Օգտագործող	Կարգավիճակ	Նշումներ
1	02-2-150021016	2015-10-30	Մ	Դիմում Շեղուեղ1	Մուտքագրվում է

Նշումներ

Բ

[Հաստատել](#)

Նկ. դիմ. 5

Ա տիրույթը տեղեկատվական բնույթի է և ցույց է տալիս տվյալ դիմումի նախորդ կարգավիճակը:

F տիրույթում մուտքագրվում են նշումները:

Սեղմելով **Հաստատել** հրամանը, տվյալ դիմումի կարգավիճակը դառնում է «Հաստատված է»՝ նկ. դիմ. 6:

Դիմումներ

Նոր դիմում
Բն դիմումները
Ժամկետանց դիմումներ
Ընդլայնված դիմում
Տեղափոխված դիմումներ

1-1 (1-ից)

#	ՀՄՕՏՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Արխիվացված է	Գրանցվել է	Վերջնաժամկետ	Շահառու	ԱՀՓ համարը
1	Վեդի	02-2-150021016	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն	Որոշել հաշմանդամության պատճառակալ կապը	Հաստատված է	Ոչ	2015-10-30	2015-11-29	Վարդան Համկեռի Տիրացույան	AG0444443

Նկ. դիմ. 6

Սա նշանակում է, որ դիմում ընդունողն ավարտել է դիմումի հաշվառման հետ կապված բոլոր աշխատանքները և դիմումի հետագա կատարման ընթացքն ապահովելու համար այն փոխանցում է համապատասխան ծառայությանը:

Կարգավիճակի պատմություն

Մուտքագրված դիմումի կարգավիճակի պատմությունը կարելի է դիտել սեղմելով **7` Կարգավիճակի պատմություն** հրամանը՝ **նկ. դիմ. 7**:

Գլխավոր / Դիմումներ / 02-1-150020977

Դիմում համար՝ 02-1-150020977

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
9	10	11	12				
Փոխկապակցված դիմումներ	Մահվան գրանցում	Նշանակել	Դիմումի տեղափոխում				

Նկ. դիմ. 7

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմ. 8**, որը կարելի է դիտել:

Գլխավոր / 22-4-150000161 / Կարգավիճակի պատմություն

Վերադառնալ

1-1 (1-ից)

#	Դիմում	Ավելացման ամսաթիվ	Օգտագործող	Կարգավիճակ	Նշումներ
1	22-4-150000161	2015-06-15	Պողոս Պետրոսյան	Մուտքագրվում է	SSS

Նկ. դիմ. 8

Կարգավիճակի պատմությունը ցույց է տալիս, թե տվյալ դիմումը հաշվառման պահից սկսած ի՞նչ կարգավիճակներ է անցել, ե՞րբ և ո՞ւմ կողմից են այդ կարգավիճակները փոփոխվել:

Փոխկապակցված դիմումներ

Համակարգում առկա տվյալ անձին առնչվող դիմումները կարելի է դիտել, սեղմելով **9՝ Փոխկապակցված դիմումներ** հրամանը՝ **նկ. դիմ. 9**:

Գլխավոր / Դիմումներ / 02-1-150020977

Դիմում համար՝ 02-1-150020977

1

2

3

4

5

6

7

8

Կից ֆայլեր

Տպել

Խմբագրել

Հաստատել

Պատասխանել

Վատարել

Կարգավիճակի պատմություն

Նշանակել դեպքի վարում

Փոխկապակցված դիմումներ

Մահվան գրանցում

Նշանակել

Դիմումի տեղափոխում

9

10

11

12

Նկ. դիմ. 9

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմ. 10**:

Գլխավոր / Դիմում / Փոխկապակցված դիմումներ

Փոխկապակցված դիմումներ

1 Բոլորը

2 Դիմումատուն որպես դիմումատու

3 Դիմումատուն որպես շահառու

4 Շահառուն որպես շահառու

5 Շահառուն որպես դիմումատու

6 Կերպարանայ

F

Դիմումի համար	01-3-150000002
Շահառու	Արամ Ավետիսի Բեգլարյան
Դիմումատու	Արեշատ Համբարձումի Բեգլարյան

U

#	ՀՄՕՏՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Արխիվացված է	Գրանցվել է	Վերջնաժամկետ	Դիմումատու	Շահառու	
1	Աջակիցակ	01-2-150000004	Բժշկաօգնական փորձաքննության գործակալություն	Այլ դիմումներ	Հաստատված է	Այո	2015-06-15	2015-07-15	Արեշատ Համբարձումի Բեգլարյան	Գարիկ Վասիլի Գուրգենյան	<div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;">U1</div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;">U2</div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;">U3</div>
2	Աջակիցակ	01-3-150000002	Սոցիալական ծառայություններ	Դիմում ի լրումն նախորդիկ ներկայացված դիմումի	Մուտքագրվում է	Այո	2015-06-15	2015-07-15	Արեշատ Համբարձումի Բեգլարյան	Արամ Ավետիսի Բեգլարյան	<div style="border: 1px solid blue; padding: 2px; display: inline-block;">+</div>

Նկ. դիմ. 10

U տիրույթում արտապատկերված են համակարգում առկա փոխկապակցված դիմումները:

Յուրաքանչյուր տողին կից առկա են պատկերագրեր, որոնց սեղմելով կարելի է դիմումները դիտել՝ **U1** պատկերագիր, խմբագրել՝ **U2** պատկերագիր, կատարել լրացումներ՝ **U3** պատկերագիր:

Էջի վերևում առկա է **F** հրամանաշարքը հետևյալ հրամաններով՝

- **1՝ Բոլորը** (այս հրամանով կարելի է դիտել համակարգում առկա բոլոր դիմումները)
- **2՝ Դիմումատուն որպես դիմումատու** (այս հրամանով կարելի է դիտել համակարգում առկա այն դիմումները, որտեղ տվյալ դիմումում որպես Դիմումատու հանդես եկած անձը մյուս դիմումներում ևս հանդես է եկել որպես դիմումատու, այսինքն՝ դիմում է ներկայացրել իր կամ մեկ այլ շահառուի համար)
- **3՝ Դիմումատուն որպես շահառու** (այս հրամանով կարելի է դիտել համակարգում առկա այն դիմումները, որտեղ տվյալ դիմումում որպես Դիմումատու հանդես եկած անձը մյուս դիմումներում հանդես է եկել որպես շահառու, այսինքն՝ դիմում է ներկայացրել ինքն իր համար)

- **4՝ Շահառուն որպես շահառու** (այս հրամանով կարելի է դիտել համակարգում առկա այն դիմումները, որտեղ տվյալ դիմումում որպես Շահառու հանդես եկած անձը մյուս դիմումներում հանդես է եկել որպես շահառու, այսինքն՝ դիմում է ներկայացրել ինքն իր համար)
- **5՝ Շահառուն որպես դիմումատու** (այս հրամանով կարելի է դիտել համակարգում առկա այն դիմումները, որտեղ տվյալ դիմումում որպես Շահառու հանդես եկած անձը մյուս դիմումներում հանդես է եկել որպես դիմումատու, այսինքն՝ դիմում է ներկայացրել մեկ այլ անձի համար)

Սեղմելով անհրաժեշտ հրամանը՝ օրինակ **Դիմումատուն որպես շահառու** **Ա** տիրույթում կարտապատկերվի համակարգում առկա այն փոխկապակցված դիմումները, որտեղ դիմումատուն հանդես է գալիս որպես շահառու:

Առկա դիմումներից յուրաքանչյուրը կարելի է դիտել օգտվելով **Դիտել** հրամանից:

Մահվան գրանցում

Մուտքագրված շահառուի մահվան դեպքում պետք է գրանցել դիմումատուի մահը, սեղմելով **10՝ Մահվան գրանցում** հրամանը՝ **նկ. դիմ. 11**:



Նկ. դիմ. 11

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմ. 12**:


- 1** դաշտում պետք է մուտքագրել շահառուի մահվան փաստաթղթի համարը:
- 2** դաշտում պետք է մուտքագրել շահառուի մահվան ամսաթիվը, որի համար անհրաժեշտ է սեղմել այդ դաշտին:



Նկ. դիմ. 12

Էկրանին կբացվի նոր պատուհան՝ օրացույցը, **նկ. դիմ. 13**:

- 1** դաշտը ցույց է տալիս համակարգչի սիստեմային ամիսը:
- 2** դաշտը ցույց է տալիս համակարգչի սիստեմային տարեթիվը:
- Ա** տիրույթում նշված է ընթացիկ ամսվա օրը (համակարգչի սիստեմային օրն է՝ **5**):
- 3** պատկերագրի օգնությամբ կարելի է ամիսը փոփոխել նվազման կարգով:
- 4** պատկերագրի օգնությամբ կարելի է ամիսը փոփոխել աճման կարգով:



Նկ. դիմ. 13

Մուտքագրելու համար պետք է ընտրել անհրաժեշտ տարեթիվը՝ **2** դաշտի ընտրացանկ, ամիսը՝ **1** դաշտի ընտրացանկ, ամսաթիվը՝ **Ա** տիրույթ:

Սեղմելով **Հաստատել** հրամանը, տվյալ շահառուի մասում՝ «**Նշում մահվան մասին**» տողին կից կառաջանա գրառում՝ մահացած է՝ «**ԱԱ235647**»:

Դիմումի տեղափոխում



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Դիմումի տեղափոխում հրամանը ակտիվ է այն դեպքում, երբ դիմումի կարգավիճակը **Հաստատված է:**

Սեղմել **12՝ Դիմումի տեղափոխում** հրամանը, **նկ. դիմում 14:**

Գլխավոր / Դիմումներ / 02-1-150020977

Դիմում համար՝ 02-1-150020977

1	2	3	4	5	6	7	8
Կից ֆայլեր	Տպել	Խմբագրել	Հաստատել	Պատասխանել	Կատարել	Կարգավիճակի պատմություն	Նշանակել դեպքի վարում
9	10	11	12				
Փոխկապակցված դիմումներ	Մանկան գրանցում	Նշանակել	Դիմումի տեղափոխում				

Նկ. դիմ. 14

Եկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմում 15:**

Գլխավոր / Դիմումի տեղափոխում / 02-4-150020928

Դիմումի տեղափոխումների ցանկ

1-1 (1-ից)

#	Ստացող ՀՄՏԿ	Ուղարկող ՀՄՏԿ	Տեղափոխող օգտվողի անունը, ազգանունը	Տեղափոխման ստաթիվը	Տեղափոխման հիմքը
1	Աջափնյակ	Վեդի	Դիմում Ընդունող1	2015-09-28 19:08:18	Գրանցված է նշված տարածքում:

Դիմումի տեղափոխում

Ստացող ՀՄՏԿ

Ընտրել **1**

Տեղափոխման հիմքը

2

Հաստատել

Նկ. դիմ. 15

1 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել դիմումը **Ստացող ՀՄՏԿ-ն:**

2 դաշտում ազատ տեքստով պետք է մուտքագրել **Տեղափոխման հիմքը:**

Կատարված տեղափոխումը ամրագրելու համար անհրաժեշտ է սեղմել **Հաստատել** հրամանը:

Տվյալ դիմումը կտեղափոխվի **Ստացող ՀՄՏԿ-ի Տեղափոխված գործեր բաժին:**


Ժամկետանց դիմումներ

Համակարգում առկա ժամկետանց դիմումները դիտելու համար պետք է սեղմել **3՝ ժամկետանց դիմումներ** հրամանը՝ **նկ. դիմ. 16:**



Նկ. դիմ. 16

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. դիմ. 17:**



Նկ. դիմ. 17

Յուրաքանչյուր տողին կից պատկերագրերով, կարելի է ժամկետանց դիմումները **դիտել՝ 4** պատկերագիր, **խմբագրել՝ 5** պատկերագիր, **կատարել լրացումներ՝ 6** պատկերագիր:

Ընդլայնված որոնում

Համակարգում որոնում կատարելու համար պետք է սեղմել **4՝ Ընդլայնված որոնում** հրամանը, **նկ. դիմ. 18:**



Նկ. դիմ. 18

Էկրանին բացված էջում՝ **նկ. դիմ. 19**, առկա ցանկացած դաշտով, կարելի է կատարել որոնում:

Ընդ որում, որոնում կարելի է կատարել ինչպես 1, այնպես էլ մի քանի դաշտերով:

Որոնման արդյունքը կարտապատկերվի տիրույթում:

Որոնման արդյունքում, յուրաքանչյուր տողին կից պատկերագրերով, կարելի է դիմումները դիտել, խմբագրել կամ կատարել լրացումներ:

Գնացիք / Դիմումներ

Դիմումի համար

Գրանցվել է

Դիմումը ներկայացնող

Դիմումատուի անունը

Դիմումատուի ազգանունը

Դիմումատուի հայրանունը

ԱԼՖ համարը

ՀՅՀ

Մարզ

Համայնք

Բնակավայր

Փառաց

Հասցե

Հաստատի անունը

Հաստատի ազգանունը

Հաստատի հայրանունը

ԱԼՖ համարը

ՀՅՀ

Մարզ

Համայնք

Բնակավայր

Փառաց

Ներկայացման ժամանակահատված

Դիմումի ուղղությունը

Դիմումի տեսակը

ՀԱՄՏԻՄ

Կարգավիճակ

Որոնել / Քննել

Դիմումներ

Նոր դիմում Փակեցնող դիմումներ Ընդլայնված որոնում

1-10 (162-ից)

#	ՀԱՄՏԻՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Գրանցվել է	Վերջնականվելու	Հաստատ.	ԱԼՖ համարը	
1	Եղվազույ	22-4-150000161	Մեղմուլակտան աղանմուրի քյուս ոլիտակտան ծառայության	Նշտակում	Մուտքագրվում է	2015-06-15	2015-06-30	Մարտիտա Կուսմիթիկ Կարգուտան	AG0444444	🔍
2	Եղվազույ	22-1-150000160	Քրուսկուտուտ քյուս ոլիտակտան ծառայության	Դիմումի աշխուտանք փնտրույ տանի՝ քննուտ քյուս փուլի փուլիտուտ քյուս նիմքով հուշկուտուտից քյուս	Մուտքագրվում է	2015-06-15	2015-07-15	Կուտիկն Կուտքուտիկն Կարգուտան	AK0428142	🔍

Նկ. դիմ. 19

Տեղափոխված դիմումներ

Տեղափոխված դիմումները կարելի է դիտել սեղմելով **5՝ տեղափոխված դիմումներ** հրամանը՝ **Նկ. դիմ. 20**:

Դիմումներ

1
Նոր դիմում

2
Իմ դիմումները

3
Ժամկետանց դիմումներ

4
Ընդլայնված որոնում

5
Տեղափոխված դիմումներ

Նկ. դիմ. 20

Էկրանին կբացվի նոր էջ՝ **Նկ. դիմում 21**:

1	2	3	4										
Նոր դիմում	Դիմումներ	Ժամկետանց դիմումներ	Ընդլայնված որոնում	Տեղափոխված դիմումներ									
1-2 (2-ից)													
#	ՀՄՕՄ	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Արխիվացված է	Նշանակված է	Գրանցվել է	Վերջնաժամկետ	Շահառու	ԱՀՓ համարը		
Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Ա10				
1	Արմավիր	13-3-150020973	Մոզիական ծառայություններ	Դիմում Մոզիական տան կացարանի հաշվառման	Կատարված է	Ոչ	Այո	2015-09-11	2015-10-11	Արմեն Կառլենի Գրիգորյան	001683853	<div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 5 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 6 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 7 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 8 </div>	
2	Վեդի	02-3-150020249	Մոզիական ծառայություններ	Այլ դիմումներ	Հաստատված է	Այո	Ոչ	Ա	2015-09-07	2015-10-07	Կարինե Գնեղի Կիրակոսյան	AF0791180	<div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 5 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 6 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 7 </div> <div style="border: 1px solid red; padding: 2px; display: inline-block;"> 8 </div>

Նկ. դիմ. 21

Ա տիրույթը ցույց է տալիս բոլոր տեղափոխված դիմումները:

- ... **5՝ Դիտել**, որով կարելի է դիտել տեղափոխված դիմումի տվյալները ([բացատրությունը տե՛ս վերևում, էջ 17](#))
- ... **6՝ Խմբագրել**, որով կարելի է խմբագրել տեղափոխված դիմումի տվյալները
- ... **7՝ Ի լրումն**, որով կարելի է տվյալ դիմումին ի լրումն նոր դիմում հաշվառել ([բացատրությունը տե՛ս վերևում, էջ 8](#))
- ... **8՝ Դիմումի տեղափոխում**, որով կարելի է տվյալ դիմումը տեղափոխել ([բացատրությունը տե՛ս վերևում, էջ 10](#))

Անձ

Գլխավոր հրամանաշարքից՝ **նկ. անձ 1**, սեղմել **3՝ Անձ** բաժինը:

Գլխավոր	Դիմումներ	Անձ	Արհիվացում	Հաշվետվություններ ▾	Ելք (vedi.dimum1)
1	2	3	4	5	6

Նկ. անձ 1

Էկրանին կբացվի նոր էջ, որն ունի հետևյալ տեսքը՝ **նկ. անձ 2**:

Գլխավոր / Անձ

Անձ

Ավելացնել անձ **1**

1-3 (3-ից)

#	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Ծննդյան ամսաթիվ	Սեռ	ԱՀՓ	ՀՄՀ	Սվյալները բերվել է ԲՊՈ ից
1	Լուսինե	Հովհաննիսյան	Աշոտի	1986-08-18	Ի	AM0783684	6808860645	Այո 2 3
2	Արեշտա	Բեգլարյան	Համբարձումի	1951-01-05	Ա	AF0541221	1501510134	3
3	Արամ	Բեգլարյան	Ավետիսի	1988-02-05	Ա	AG0233985	1502880342	3

Նկ. անձ 2

Այս էջում առկա է այն անձանց ցուցակը՝ **Ա** տիրույթ, որոնց տվյալները մուտքագրվել են ձեռքով կամ բեռնվել են բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանից:

Նոր անձ ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել **1՝ Ավելացնել անձ** հրամանը:

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. անձ 3**:

Այս էջում պարտադիր դաշտեր են համարվում **1, 2, 4, 5, 6, 7, 14, 15, 16, 17** դաշտերը:

1 դաշտում պետք է մուտքագրել անձի անունը:

2 դաշտում պետք է մուտքագրել անձի ազգանունը:

3 դաշտում պետք է մուտքագրել անձի հայրանունը:

4 դաշտում պետք է մուտքագրել անձի ծննդյան ամսաթիվը, որի համար անհրաժեշտ է սեղմել այդ դաշտի վրա:

Էկրանին կբացվի նոր պատուհան՝ օրացույցը, **նկ. անձ 4**:

Գլխավոր / Շահառուներ / Անձի մուտքագրում

Անձի մուտքագրում

Անուն Ազգանուն Հայրանուն

Ծննդյան ամսաթիվ Սեռ

ԱՀՓ տեսակ ԱՀՓ ՀՄՀ

Տրման ամսաթիվ Վավերականության ժամկետ

Հեռախոսի համար Բջջային հեռախոսի համար Էլ. փոստ

Մարզ Համայնք Բնակավայր

Փողոց

Շենք/Տան Բնակարան

Նկ. անձ 3

1 դաշտը ցույց է տալիս համակարգչի սիստեմային ամիսը:

2 դաշտը ցույց է տալիս համակարգչի սիստեմային տարեթիվը:

Ա տիրույթում նշված է ընթացիկ ամսվա օրը (համակարգչի սիստեմային օրն է՝ **5**):

3 պատկերագրի օգնությամբ կարելի է ամիսը փոփոխել նվազման կարգով:

4 պատկերագրի օգնությամբ կարելի է ամիսը փոփոխել աճման կարգով:



Նկ. անձ 4

Մուտքագրելու համար պետք է ընտրել անհրաժեշտ տարեթիվը՝ **2** դաշտի ընտրացանկից, ամիսը՝ **1** դաշտի ընտրացանկից, ամսաթիվը՝ **Ա** տիրույթից:

5 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անձի **սեռը**:

6 դաշտի ընտրացանկից պետք է ընտրել անձի **ԱՀՓ տեսակը**:

7 դաշտում պետք է մուտքագրել անձի **ԱՀՓ համարը**:

8 դաշտում պետք է մուտքագրել անձի **ՀՄՀ-ն**:

- 9 դաշտում պետք է մուտքագրել **փաստաթղթի տրման ամսաթիվը**:
- 10 դաշտում պետք է մուտքագրել **փաստաթղթի վավերականության ժամկետը**:
- 11 դաշտում պետք է մուտքագրել անձի **Հեռախոսի համարը**:
- 12 դաշտում պետք է մուտքագրել անձի **բջջային հեռախոսի համարը**:
- 13 դաշտում պետք է մուտքագրել **Էլեկտրոնային փոստը** (մուտքագրումը պետք է կատարել ըստ գոյություն ունեցող շաբլոնի՝ **arev@mail.com**: Պարտադիր է «@» նշանը և անվանումից հետո «.» կետը):

Այս դաշտում տվյալի մուտքագրումը պարտադիր դաշտ չէ:

14 դաշտի ընտրացանկից ընտրելով անհրաժեշտ **մարզը**, 15՝ «**Համայնք**» դաշտի ընտրացանկում կարտացոլվի այդ մարզին համապատասխան համայնքների ցանկը, որից էլ պետք է ընտրել անհրաժեշտ **համայնքը**:

15 դաշտի ընտրացանկից ընտրելով անհրաժեշտ համայնքը, արդյունքում 16 դաշտի ընտրացանկում, կարտացոլվի այդ համայնքին համապատասխանող բնակավայրերի ցանկը, որից էլ պետք է ընտրել անհրաժեշտ **բնակավայրը**:

- 17 դաշտում պետք է մուտքագրել **փողոցը**:
- 18 դաշտում պետք է մուտքագրել **շենքը**:
- 19 դաշտում պետք է մուտքագրել **բնակարանը**:

Սեղմել **Հաստատել** հրամանը:

Մուտքագրված անձի տվյալները կամրագրվեն տվյալների շտեմարանում և **Ա** տիրույթում կգրադեցնեն նոր տող՝ **Նկ. անձ 5**:

#	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Մեծնյան ամսաթիվ	Սեռ	ԱԶՓ	ՀՕՀ	Տվյալները բերվել է ԲՊՈ ԻԳ
1	Լուսինե	Հովհաննիսյան	Աշոտի	1986-08-18	Ի	AM0783684	6808860645	Այո 2 3
2	Արեշատ	Բեգլարյան	Համբարձումի	1951-01-05	Ա	AF0541221	1501510134	Այո
3	Արամ	Բեգլարյան	Ավետիքի	1988-02-05	Ա	AG0233985	1502880342	Այո

Նկ. անձ 5

Յուրաքանչյուր տողին կից առկա են հետևյալ պատկերագրերը՝

- **2՝** Դիտել
- **3՝** Խմբագրել



Անձ բաժնով հաշվառված անձի տվյալներով **Դիմումներ** բաժնում հնարավոր կլինի հաշվառել նոր դիմում (տե՛ս **Նոր դիմում** բաժինը, էջ 11):

Արխիվացում

Այս բաժինը նախատեսված է դիմում ընդունողի կողմից՝ **տվյալ օրվա** ընթացքում մուտքագրված դիմումների արխիվացման, համապատասխան ամփոփագրի տպման, և իրավասու անձանց կողմից ստորագրված թղթային ամփոփագիրը սկանավորելու և այն համակարգում կցելու համար:

Գլխավոր հրամանաշարքից՝ **նկ. արխիվ 1**, սեղմել **4՝ Արխիվացում** բաժինը:



Նկ. արխիվ 1

Էկրանին կբացվի նոր էջ, որն ունի հետևյալ տեսքը՝ **նկ. արխիվ 2**:

Գլխավոր / Արխիվացում

Արխիվացում

Արխիվացնել տվյալ օրվա դիմումները 1

1-10 (146-ից) 3

#	Համալիր կենտրոն	Տարածքային մարմին	Հանձնեց	Շնորհեց	Անփոփագրի համար	Դիմումների քանակ	Բն. փաստ. քանակը	Արխիվացման ամսաթիվ
1	Վեդի	ՍԱՊԾ	Կարմեն Ֆառույան	Սոցապահովության Կենտրոնի պետ	02-4-150002625	30	0	2015-09-07
2	Վեդի	ՍԱՊԾ	Կարմեն Ֆառույան	Սոցապահովության Կենտրոնի պետ	02-4-150002533	22	Ա	2015-09-04
3	Վեդի	ՍԱՊԾ	Կարմեն Ֆառույան	Սոցապահովության Կենտրոնի պետ	02-4-150002432	12	0	2015-09-03


Նկ. արխիվ 2

Սեղմելով **2՝ Դիպել** հրամանը կբացվի **նկ. արխիվ 5-ը**:

Սեղմելով **3** պատկերագիրը, տվյալ սյունը կարելի է դասավորել աճման կամ նվազման կարգով:

Սեղմել **1՝ Արխիվացնել տվյալ օրվա դիմումները** հրամանը, էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. արխիվ 3**:

Ստորև կբացվի ընտրացուցակ՝ **Ա** տիրույթ, որից պետք է ընտրել, թե ըստ ո՞ր կազմակերպության համար պետք է կատարվի արխիվացումը (տվյալ դեպքում ընտրվել է ԶՊԳ գրառումը):



Նկ. արխիվ 3

Էկրանին կբացվի նոր էջ՝ **նկ. արխիվ 4:**

Գլխավոր / Արխիվացում / Տվյալ օրվա դիմումների արխիվացում

Տվյալ օրվա դիմումների արխիվացում

1-1 (1-ից)

#	Դիմումի համար	Դիմումի ուղղությունը	Դիմումի տեսակը	Կարգավիճակ	Դիմումի էջերի ընդհանուր քանակը
1	02-1-150020977	Ջբաղվածության պետական գործակալություն	Դիմում աշխատանք փնտրող անձի՝ բնակության վայրի փոփոխության հիմքով հաշվառումից դուրս գալու	Հաստատված է	(<i>Նշված չէ</i>)

Համալիր կենտրոն	Վեդի
Տարածքային մարմին	Ջբաղվածության պետական գործակալություն
Բնօրինակ փաստաթղթերի ընդհանուր քանակը	0
Դիմումների քանակ	1
Հանձնեց	Դիմում Շնրունոյ1
Շնորհեց	Նենգել Մարգարյան

Արխիվացնել Չեղարկել

Նկ. արխիվ 4

Անհրաժեշտ դիմումի՝ տողի, **2** պատկերագիրը սեղմելով, կարելի է դիտել տվյալ դիմումը:

Սեղմել [Արխիվացնել](#) հրամանը:

Տվյալ օրվա դիմումները կարխիվանան համակարգի կողմից ավտոմատ կերպով գեներացվող արխիվացման ամփոփագրով, որը կստանա համար՝ **նկ. արխիվ 4:**

Էջում առկա են հետևյալ հրամանները՝

- **1՝** Խմբագրել
- **2՝** Տպել
- **3՝** Կցել Ֆայլը
- **4՝** Վերադառնալ
- **5՝** Ներբեռնել

Գլխավոր / Արխիվացում / Ամփոփագիր համար՝ 0000000030

Ամփոփագիր համար՝ 0000000030

Խմբագրել Տպել Կցել Ֆայլը Վերադառնալ

Ամփոփագրի համար	0000000030
Դիմումների էջերի ընդհանուր քանակը	0
Դիմումների քանակ	2
Դիմում ընդունող մասնագետ	Դիմում Շնրունոյ1
Արխիվի աշխատող	Արխիվ Աջամիսյակ
Արխիվացման ամսաթիվ	2015-07-03
Խմբագրման ամսաթիվ	2015-07-03
Ֆայլի կցելու ամսաթիվ	(<i>Նշված չէ</i>)

Նկ. արխիվ 5

